

Գ Ի Ւ Ղ Ի Մ Ա Ր Դ Ի Կ

I

Ա Յ Ծ Ա Ր Ա Ծ Ե Ղ Օ Ն

Ա.

Գարնան արձակուրդներին ես ստիպուած էի մնալ
քաղաքում։ Հեռու էր մեր գիւղը, բայց պատճառը հե-
ռաւորութիւնը չէր, այլ այն, որ նա լեռնային գիւղ
էր։ Մեր գարունը գալիս է ուշ, գալուց յետոյ էլ եր-
կար տանջում է մարդկանց իր ձիւնախառն անձրենե-
րով, թանձր մշուշներով, մանաւանդ անտանելի ցեփիե-
րով։ Ոչինչ հրապոյր չը կար տարուայ այդ ժամանակ գիւղ
գնալու մէջ։

Բայց մի տարի Զատիկն ուշացաւ։ Ապրիլի 15-ին
մեղ արձակեցին մինչև 29-ը, իսկ դա մի ժամանակա-
միջոց էր, երբ նոյն իսկ մեր մառախլապատ ու ջրողոզ
սարերն էլ չորանում են։ Եղբայրս եկաւ, ինձ համար
ձի բերեց։ Իմ գալրոցական կեանքի մէջ դա առաջին
անգամն էր, որ Զատիկին տուն էի գնում։

Հենց այդ պատճառով էլ մայրս գրկեց ինձ մի ա-
ռանձին, կրակոտ հրճուանքով։ Նա հաշուել էր, որ վեց
անգամ Զատիկը մտել է մեր տան դռնով և ոչ մի ան-
դամ չէ դառել ինձ մեր օջախի կողքին։

—Մահը մերն է, մենք մահինն ենք, աւելացրեց
նա, իր արտասունքոտ համբոյրները դրոշմելով իմ
դէմքին։

Անցեալ տարի մայրս հազիւ էր ազատուել մահից,

և այնուհետև այդ խօսքերը սովորական ասացուածք էին դարձել նրա բերանում։ Ամեն մի նշանաւոր օր նա կամենում էր գուշակել, թէ արդեօք դա վերջինը կը լինի իր համար։ Եւ այս անդամ էլ նա արտասանեց։
—Ո՞վ գիտէ, եկող տարի...»

Բայց չը վերջացրեց։ Մի ակնթարթում զգաց, որ ինձ տիտուր մտքեր յայտնելու համար չէր բերել տուել և շտապեց քաղցրացնել իմ սիրաը, ինչպէս կարող էր։ Հարցերի տարափ էր տեղում ինձ վրայ։—Ի՞նչպէս եմ քաղաքում, գլուխս հօ չէ ցաւել, անկողինս փափռէլ էր։ Մայրական հետաքրքրութիւնը գեռ չը յագեցրած, նա յանկարծ ընդհատեց իր հարցուփորձը և յայտնեց, որ այծարած եղօն պսակուել է։

—Հա, բացականչեցի ես սաստիկ զարմացած։

Միայն մայրս գիտէր, թէ ինչ է ինձ համար այդ այծարածը։ Նա, ի հարկէ, նկատեց, թէ հրախիսի մեծ ախորժանքով եմ ես լսում այդ նորութիւնը, ու ինքն էլ ծիծաղկոտ և ուրախ էր։ Կարծես պսակուել էր մեր տան անդամներից մէկը, կարծես այդ հարսանիքը մեր ընտանեկան կեանքի մէջ մի նոր շրջան պիտի բաց անէ։

Ես նոյն իսկ մոռացայ, որ քաղաքից ընծաներ եմ բերել իմ եղբօր երեխաների համար, որոնք շրջապատել էին ինձ, ձգձգում էին իմ աշակերտական զգեստը, ճիշտում էին իմ դլխարկը, աշխատելով իրանց բոլոր մատներով շօշափել և եթէ հնար է՝ նաև պոկել նրա վրայ կպցրած պղնձէ նշանը։ Հարցնում էի մօրս. երբ, ինչպէս եւ նա պատմում էր, հիացած իմ վառ հետաքրքրութիւնից։

Այս, այդ գէպքը, որ տեղի էր ունեցել եօթը շաբաթ առաջ, բարեկենդանին, աւելի հետաքրքրական էր ինձ համար քան Զատիկը, որ արդէն սկսել էր իր աղմկալի գնացքը և որին ես վաղուց չէի տեսել։

Ամեն բան կարող էր պատահել։ Բայց այծարած եղօն ամուսնացած—դա անհաւատալի էր...»

Բ

Ես նրան ճանաչում էի վաղուց, իմ մանկութեան օրերից:

Մեր բակի մեծ մասը Մէհրունց կտուրն էր ։ Մեզ համար մի երկրորդ տուն էր այդ կտուրը։ Ամառուայ գիշերներն այդտեղ քնելը մի առանձին հրապոյր ունէր եղբայրներիս և ինձ համար։ Այդտեղ էինք խաղում մենք, այդտեղից էինք տեսնում գիւղը և կամ երբ այլ ևս գործ չէր մնում անելու, մօտենում էինք Մէհրունց ահագին երդին և նրա ծակով նայում էինք ցած, տեսնում էինք թէ ինչ են անում այնտեղ։

Լեռնային հայ գիւղը զարմանալի դրացիասիրութիւն է սովորեցնում: Տեղաւորուած լինելով լերան լանջի վրայ, նա այնպէս է սահմանում, որ մի տան կտուրը միւսի բակը լինի։ Մեր կտուրն էլ ուրիշի բակն էր և մենք էլ տեսնում էինք երդի ծակով դէպի մեզ ուղղած հետաքրքիր աչքեր։

Ընդհանուր կանոն էր՝ բողոքել այդքան մօտիկ հարեանութեան դէմ միայն այն դէպքում, երբ երդի ծակից անզգուշութեամբ կամ դիտմամբ հող էին թափում Խոստովանում եմ, այդ տեսակ չարութեան համար ես շատ անդամ եմ Մէհրունց պառաւի հայհոյանքներն ու անէծքները կերել։ Մի անգամ նա տանից հանեց և մօրս մօտ բերեց մի մեծ կաթսա, որ լիքն էր նոր մէրած մածնով. իմ թափած հողը ծածկել էր մածնի երեսը։ Այն օրուանից ես վախենում էի պառաւից։

Բայց և այնպէս, Մէհրունց տունը զարմանալի համը բերող էր այն կողմնվ, որ նա դրացիական փոխադարձութիւնից զուրկ էր. նա չունէր իր առջև հարեանի կտուր, ուրեմն չէր կարող քնել ուրիշի կտրին, նայել ուրիշի երդից։ Մէհրունց տանից ցած զառիվայրը այնքան ուղղածիդ էր, որ տուն շինել անհնարին էին համարել, և լայն տեղ էր, մնացել փողոցի համար, որ պը-

տոյտ էր գալիս ՄԷՀրունց մեծ ցանկապատի տակով ու երկու հինաւուրց մեծ ծառերի միջով գլորում էր դէպի նեղ ու երկար ձորը:

Սակայն հարևանի կտուրի փոխարէն ՄԷՀրունց տունն ունէր մեծ ու լայն, թէև շատ էլ զառիվայր բակ: Այնտեղ բուսած էին թթենիներ, դրանց տակ թափուած էին հին մեծ գերաններ, իսկ այդ գերանների վրայ էր լինում եղօն:

Ես նրան այնտեղ էի տեսնում: Տեսնում էի ամեն երեկոյ, գարնան սկզբից մինչև աշնան վերջը:

Ինչպէս որ ՄԷՀրունց բակից չէր կարող պակասել այծերի հօտը, այնպէս էլ այդ հօտից չէր կարող պակասել եղօն:

Երբէք: Ես այժմ էլ աշխատում եմ յիշել գոնէ մի երեկոյ, երբ եղօն իր տեղը չը լինէր: Բայց չը կայ իմ յիշողովթեան մէջ այդպիսի բացառութիւն և ինձ թուում է թէ նա չէր հիւանդանում, գոնէ այն ամիսների ընթացքում, երբ նա այծեր էր արածացնում: Տեսնուած բան չէր, որ նա իր հօտից յետ մնար արօտ գնալիս, թէ վերադառնալիս Գնալը, քանի երեխայ էի, չէր տեսնում, բայց ամեն օր վերադարձը մեր աչքի առջև էր: Օրուայ որոշ ժամին եկեղեցու դաւթում երեսում էին եղօի առաջընթաց այծերը, երկու կամ երեք հատ: Ապա միմեանց ետևից լոյս էին ընկնում և միւս այծերը, իսկ յետոյ, անպատճառ բոլորից յետոյ, երեսում էր ինքը եղօն:

Նա չէր սիսալում նոյն իսկ այնպիսի օրերին, երբ արեգակ չէր լինում: Իսկ մեր գիւղը շատ ու շատ էր տեսնում այդպիսի օրեր: Մշուշը պատել է ամբողջ աշխարհը, չը գիտես՝ արդեօք մթնում է, թէ լուսանում է մուայլ, անլոյս, խօնաւ օրը: Գիտցողը եղօն է: Այդպիսի օրերին մայրս քանի անգամ ուղարկել է ինձ ՄԷՀրունց կտուրը, որպէսզի իմանամ՝ արդեօք եկել է եղօի հօտը:

Միայն այն ժամանակ, երբ հաստատում էր, որ

եկել է, կանայք վերջ էին դնում իրանց գործին և վեր կենում, երեկոյեան պատրաստութիւններն սկսում:

Շատ հօտեր էին մտնում մեր գիւղը, բայց միայն Եղօն էր, որ երբէք չէր խաբում իր հարևաններին....

9.

Միջահասակ էր Եղօն, բարակ կազմուածքի տէր: Նա ջահէլ էլ չէր: Մայրս ասում էր թէ վաղուց է նրան այդպէս տեսնում:

Բայցի այս տեղեկութիւններից, ինչ կարող եմ ասել՝ Եղօին նկարագրելու համար: Գուցէ այն, որ նա հագնում էր գեղնաւուն շալի շուփալ, մէջքին կապած ունէր հովուի գորշ, գործած քսակը, որի մէջ, ի հարկէ, նրա հացն էր պահւում: Նա մի մեծ մահակ էլ ունէր: Բայց այդ բոլորը գիւղական աշխարհում շատ սովորական բաններ են:

Իսկ ինչ էր արտայայտում Եղօի դէմքը, ինչ տեսակ մարդ էր նաև Ահա այդ գժուար է ասել: Մարդու հոգին նրա հայեացքի մէջ է երևան գալիս և այն արտայայտութեան մէջ, որ ստանում է ամբողջ դէմքը. իսկ Եղօի աշքերը տեսնել անկարելի էր. նրա դէմքի վերին մասը մշտապէս ծածկուած էր: Եղօի սովորութիւնն էր փափախը քաշել աշքերի վրայ, այնպէս որ երբ նա կամենում էր քիչ դէպի վեր նայել, պիտի բարձրացնէր ամբողջ գլուխը:

Ինչու էր այդպէս անում: Ահա այս հարցն էր, որ գրաւում էր իմ մանկական հետաքրքրութիւնը: Ես անթիւ անդամ գիմել եմ մօրս. նա աշխատում էր բացատրել, բայց զանազան ենթադրութիւններից դէնը գնալ չէր կարողանում: Հաստատն այն էր, որ ոչ ոք չէ տեսել Եղօի ճակատը: Ոչ ոք, բայցի, ի հարկէ, նրա մօրից, որ Մէհրունց պառան էր: Տարէնը երկու կամ երեք անդամ, ինչպէս պատմում էր իմ մայրը, պառաւին աղողում էր ամբողջ օրեր շարունակուող աղաչանք-

Ներով ու յանդիմանութիւններով կալղեցնել Եղօին և
լրամանալ նրա գլուխը Այդ ժամանակ էլ նա տեսնում
էր որդու ճակատը:

Միայն շատ ուշադրութեամբ նայողը կարող էր
նկատել փափախի մազերի տակից երկու նեղ ու փոք-
րիկ աչքեր, որոնք անդադար ճպճպում էին, կիսախոռվ,
կարծես միշտ իրանց առջև փայլուն առարկաներ ու-
նէին, որոնց չէ կարելի նայել առանց կոպերը կուչ ա-
ծելու:

Բաց էին մնում նրա բարակ ու մեծ քիթը, դուրս
ցցուած, նիհար այտերը և միշտ կիսաբաց բերանը:
Նա ունէր փոքրիկ բեղեր և շատ ցանցառ միրուք, որ
կարծես երբէք չէր երկարանում:

Չը գիտեմ գուք ինչպէս կը հասկանաք այսպիսի դէմ-
քը, բայց ինձ վրայ նա միշտ թողնում էր մի խորհըր-
դաւոր, դժուար հասկանալի տպաւորութիւն...

Դ

Երեկի հէնց այդ է պատճառը, որ ես այժմ էլ,
պյնքան տարիներից յետոյ, կարողանում եմ մտաբերել
Եղօին միայն մի տեսակ խորհրդաւոր քօղով ծածկուած
միջավայրի մէջ:

Այն երեկոները, երբ ես տեսնում էի նրան, ի հար-
կէ, միանման չէին: Կային պարզ, աստղազարդ երեկո-
ներ, կային միանդամայն խաւար ու մառախլապատ,
ինչպէս նաև հրաշալի լուսնեակ երեկոներ: Բայց իմ յի-
շողութիւնը մի տեսակ երեկոների մէջ է ծրաբել Եղօին
ու այդպէս էլ պահել:

Խաղաղ է չորս կողմը, ամեն ինչ մի տեսակ սպա-
սողութեան մէջ է, կարծես ուզում է վճռել՝ կը լինի
արդեօք թէ ոչ: Այդպէս տրամադրողը երկինքն է: Նա
ծածկուած է ամպերով, տեղաւեղ ծանր ու սե, շատ
բեղ բարակ, կաթնագոյն ամպերով: Սպասում ես անձ-
րեի, բայց բնութեան մէջ կայ մի առոյգ, յուսատու

շեշտ, որ թելադրում է թէ անձրե, երեի, չի լինի. և
ամբողջ գիւղը դուրսն է գանհուռմէ

Եների հաչոց անգամ չէ լուռմ, կարծես այդ տեսակ գիշերներին երկինքը ինքն է հրամայում լուռ ու հանգիստ մնալ: Հեռու հորիզոնի վրայ, մթութեան մէջ միայն իրանց անորոշ ուրուագծերը ցոյց տուող սարերի գլխին, եռանդով փայլատակումէ կայծակը, բայց որոտ չը կայ: Նա յաճախ այնքան զօրաւոր է, որ լուսաւորումէ և գիւղը, նօսր խաւարի միջից հանելով կամ եղօի այծերի միրուքաւոր գլուխները, կամ կարի ծայրին նըստած ալեորի գէմքը, կամ թէ շտապով ինչոր տեղ վազող շանը: Մեզմ կերպով, կարծես վախվախելով, օրօրւում են թթենիների տերեները. և երկնային այս խաղղութեան մէջ աղօթքի մրմունչների նման բարձրանում են մարդկանց հանդարտ ու հեզ խօսակցութիւնները: Նոյն իսկ աղաղակներն անգամ մի կերպ զսպուած ու մեզմ են համառում՝ բնութեան պէս տրամադրուած մարդու ականջին...

Զը գիտեմ ինչո՞ւ այդ տեսակ երեկոների հետ իմ յիշողութեան մէջ կապուած է և գիւղական թոնիրը: Ահա այն բարձր բակում, մեր տան կողքին, հաց են թխում: Հրեղէն սիւնը երբեմն գուրս է թռչում թոնիրի միջից, տարածում է մի պայծառ լուսաւորութիւն, որ բաց է անում այսպիսի տեսարան:— այծերի հօսը դանդաղ որոճում է. Մէհրունց հարսը վերջին այծերն է կլթում: մի քանի բարձրահասակ այծեր գերանների վրայ են և նրանց մէջ եղօն իր կարճ երեկոն է անցկացնում:

Ի՞նչ էր նա անում այդպէս անշարժ ու անխօս, երեսը դարձրած գէպի գիւղամէջ: Ինձ թւռում էր, թէ նա չէ կը տանում գիւղը գիտելուց. չէ որ միայն երեկոյեան մի քանի վաղանցուկ ժամերն են տուած նրան՝ աշխարհը, մարդկային աշխարհը տեսնելու համար: Մնացած ժամանակը նա բացակայ էր այդ աշխարհից և նրա համար ոչ տօն ու կիրակի կար, ոչ անձրե ու ցեխ:

Մացնելով հօտը մեծ ու զառիվայլը բակը, Եղօն չէր հեռանում այնուեղից մինչև վաղ առաւօտը, մինչև արօտ գնալու ժամը։ Կարծես իրաւունք չէր համարում գնալ գիւղամէջ, մարդկանց շարքերը մտնել։ Հեռու ամենքից, նա կարծես խորթ ու օտար էր հայրենի գիւղում և գիւղն էլ հաստատում էր, որ նա, այն, այդպէս է։ Հարեան բակերում մարդիկ էին լինում կանգնած, շատերն անցնում էին փողոցով, բայց ոչ ոք «բարի երեկոյ» չէր ասում Եղօն։ Նոյն իսկ շատ քիչ էր պատահում, որ Մէհրունց տանը ապրողներից մէկը մօտենար նրան՝ միքանի խօսք փոխանակելու համար...

Եւ նա գերանների վրայից, Մըլապատուած իր սենոխազներով, նայում էր, նայում էր իր փափախի տակ կուչ եկած նեղիկ աչքերով։ Այդ էր այն ամենը, ինչ մոցնում էր նրան մարդկանց հասարակութեան մէջ. թում էր թէ նա շատ ուշադիր և հետաքրքրուող մէկը պիտի լինէր. ուզում էիր ասել թէ նրա ականջները մի առանձին քաղցրութեամբ, առանձին ախորժակով են ներս ընդունում գիւղական ձայները և նա այդ ծիծաղների, գանդատների, հայհոյանկների հետ մաքով մոնում է ապրող մարդկութեան ծոցը, ճաշակում է այն ամենը, ինչ կայ այդտեղ։

Բայց այդպէս էր—Չը գիտեմ։

Նրա նստած տեղից միքանի քայլ էր մինչև այն տունը, ուր ծնուել էր նա, ուր այժմ ապրում էին նրա ծերունի հայրը, երկու եղբայրները։ Բայց նա այդ տան շեմքով էլ շատ քիչ էր մտնում, երբ պէտք էր կամ ջուր խմել, կամ հաց վերցնել։ Մէհրունց տան մէջ պատահում էին ուրախ և տխուր գէպքեր. եղել էին հարսանիքներ, մահեր, բայց Եղօն իրանից այդքան մօտիկ կեանքի արտայայտութիւններին էլ սիրում էր նայել օտարի նման, իր գերանների գլխից։ Մայրս պատմում էր, որ իմ ծնուելուց մի տարի յետոյ մեռաւ Եղօնի եղբայրը։ Երիտասարդ մարդ էր, շատ տնարար. ծերունի Աւագը իրանց սրահից բառաչում էր,

թէ քանդուեց Մէհրունց տունը. մեռածի մայրն անդադար ուշաթափում էր։ Հարևաններն անգամ լաց էին լինում։ Իսկ Եղօն։ Նա ներս մտաւ, կանգնեց շէմքի մօտ, մի թէ երկու անդամ հառաջեց և ապա էլի դուրս գնաց։ Միւս օրը թազումն էր, բայց Եղօն սովորական ժամին քշեց իր հօտը դէպի արօտ։ Դեռ եկեղեցու մէջ չէ եղել նա...

Եւ սակայն, նա չար մարդ չէր։ Զարերին ամենից լաւ ճանաչում են երեխաները. իսկ մեր գիւղում չը կար երեխայ, որ վախենար Եղօից։ Դեռ չէր պատահել, որ մի անգամ Եղօն մի երեխայից հաց խլէ կամ ծեծէ նրան, ինչպէս անում էին հովիւները, այն էլ այնպիսիները, որոնք Եղօի պէս տարօրինակ մարդիկ չէին։

Ահա հեղիկ անցնում է գիշերը։ Թթենիների տակ վնչում, հազում են այծերը, թոնը շուրջը մի քանի կանայք են երեւում։ Ես տեսնում եմ մէկի դէմքը—մի պառաւ է դա, երկար շամփուրով խառնում է կրակը։ Բոցերը մի անգամ էլ արծարծում են ու ցած ընկնում։ Ահա հրեղին սինը բոլորովին վերջացաւ և միայն խաւարի մէջ երեւացող թեժ կարմրութիւնն ու պառաւի դէպի առաջ խոնարհուելին ու յետ նստելը ցոյց են տալիս, թէ ինչ է կատարում այնտեղ։ Բարձրացաւ, մինչև գիւղի ծայրը տարածուեց նոր հացի սուր, ախորժելի հօտը։ Հարևաններին մի-մի հաց է ուղարկում, չէ մոռացում և Եղօն։ Դա կարգ է, որ կատարում են կանայք՝ իրանց միայն յատուկ շերմեռանդութեամբ։

Հետզհետէ մարում են ճրագները. քունը մեզ քաշում է դէպի փափուկ անկողին։ Բոլոր այծերը նստուտել են միմեանց մօտ. գիշերային թոյլ լոյսի մէջ նըրանք երեւում են իբրև անշարժ սկ բծերի մի խումբ։ Նրանց մէջտեղը, գերանների վրայ, երեւում է մի նոյնպիսի անորոշ, բայց աւելի երկար բիծ։ Դա այծարածն է, «անտառի մարդը», ինչպէս սովոր ենք մենք անուանել այդ տեսակ մարդկանց։

Բայց ես պէտք է ասեմ, որ «անտառի» բառը բո-

լորովին ճիշդ չէ եղօի վերաբերմամբ։ Մեր գիւղը ունի թանձր, լայնատարած անտառներ, որոնք ծածկում են մի քանի լեռնային բարձրութիւններ։ ստուերների այդ հսկայական աշխարհը, ուր ման գալու համար պէտք է մի քիչ էլ հսկայ լինել, եղօի համար չէր։

Երևակայեցէք մի ուրիշ, բայց աւելի ահադին ու երկար սար, լերկ, ամբողջովին ժայռեր, կաղմուած սե, փխրուն քարից։ Նա մեր գիւղի ետևումն է, մօտ երեք ժամ ճանապարհ հեռու նրանից։ Տեղատեղ այդ սարը ծածկում են ցածրահասակ թփեր, իսկ ամեն տեղ միապաղաղ սե տարածութեան վրայ ցաք ու ցրիւ երեսում են վայրի կարճահասակ բոյսեր, որոնք մի խըդ-ճուկ ու աղքատիկ կենդանութիւն են հազորդում ընդ-հանրապէս չոր ու ցամաք քարային անհուն զանդուածին։ Ապառաժների կրծքին, քարակոյտերի արանքներում վազվում են միայն բարակ խէզները և անճոռնի քարաթօթօչները։ Բայց ողորմած է ընութիւնը. կան միքանի ձորեր, որոնց մէջ պահուել է հողը. այդտեղ փոքրիկ ջրեր են բզիւմ և բուսականութիւնը մի քիչ հարստանում է. գոյներով աղքատ ծաղիկներ են պատահում նօսր ու կարծիքի խոտերի մէջ, իսկ մի երկու երեք տեղ էլ փոքրիկ անտառներ են գոյանում։

Դա էր եղօի աշխարհը։ Այդտեղ, ժայռից ժայռ թափառելով իւր այծերի հետ, նա անց էր կացրել ամբողջ տարիներ, ապրել, մեծացել էր այնպէս, ինչպէս այդ ընութիւնն էր կամեցել։

Ե

Եւ այդ մարդը ամուսնացել էր...

Գեղեցիկ Զատիկ ունեցանք։ «Ոսկի օրեր են», առ սում էին գիւղացիները։ Եւ իրաւ, ամբողջ ժամանակ ժպտուն երկինքը ոսկի էր թափում, իսկ մեր սարերի ընութիւնը գիտէ այդ ճառագայթների տակ բաց անել մի ապշեցնող շոայլութիւն։

Թաթախման օրը գիւղը դպրում էր աղաղակներից ու իրարանցումից։ Բայց տօնի ամբողջ ծանրութիւնը կանանց վրայ էր ընկած։ Մայրս շունչ քաշելու ժամանակ չունէր, մեր տունը մեծ է, շատ են մանաւանդ երեխաները։ թէև օգնում էին հարսերը, բայց տան մեծի գործը միշտ կրկնապատճիկ է։ Այնուամենայնիւ, մայրս ժամանակ գտաւ՝ ինձ մի հետաքրքրական նորութիւն էլ հաղորդելու։ Նա ասաց, որ Եղօի հարսին էլ պիտի «Ժամ հանեն»։

Եկեղեցում կանգնեցի քահանաների մօտ, որպէսզի կարողանամ տեսնել կանանց վերնատունը։ Վերջապէս նկատեցի նրա երկու անկիւնում վառ մոմեր ըռնած աղջիկներին։ Երեում էր, որ երկու հարս են ժամ բերել։ Բայց ո՞րն էր Եղօինը։ Ժամը վերջանալու վրայ ներս մտաւ հարսանիքի շորեր հագած մի երիտասարդ։ Ես նրան ճանաչում էի։ Նկատեցի, որ նա անդադար նայում է դէպի ձախ անկիւնը։ Ուրեմն Եղօի հարսը աջ անկիւնումն էր։ Նատ հետաքրքրական էր—կըդար արդեօք և Եղօն, որպէսզի ինքն էլ նայէ այդ երեկոյ իրան պատկանող անկիւնին։

Նա չեկաւ։

Ժամը արձակուած էր, բայց ծերունի քահանան ինձ պահեց բակում և հարց ու փորձ էր անում քաղաքի մասին։ Այդ ժամանակ ես տեսայ սովորական պատշերը։ գալիս էին Եղօի այծերը, իսկ ամենքից յետոյ նա ինքը, ինչպէս միշտ, գլուխը բարձրացրած, որ մտիկ տայ փափախի տակից։

Յայտնի է, թէ ինչ վճիռ պիտի կայացնէի ես տուն վերագառնալիս, ամեն ինչ վկայում էր, որ նա չէ փոխուել և երկու կեանքերի միացումից մի նոր դրութիւն համարեա չէր ստեղծուել։ Իսկ երբ տեսայ Եղօին թթենիների տակ, իր սովորական տեղը, բոլորովին անտարբեր դէպի զատկական երեկոյի յուզմունքները, ինձ համար դրեթէ այլես կասկած չը մնաց, որ այդ ամուսնութիւնը մի թիւրիմացութիւն է եղել, որ Եղօն

ինքն էլ չէ իմացել, թէ ինչ է անում Այդպէս էլ ես
ասացի մեր տանը, զատկական ընթրիփի վրայ, և ոչ ոք
չասաց, թէ ես սխալում եմ:

Մարդուն ճանաչելը ամենադժուար բանն է աշ-
խարհում—այս եղբակացութեան վրայ էլ կանգ առանք
ամենքու:

Այս, դա շատ ճիշդ էր:
Կիրակի առաւտեան մենք, ի հարկէ, շատ վաղ վեր կա-
ցանք: Եկեղեցում մատազ կար, իսկ դիւղին յայտնի
էր, որ մեր տէրտէրներից մէկը սաստիկ շտապող է,
սիրում է կարճ կորել:

Արեգակը արդէն գուրս էր եկել: Որքան մեծ ե-
ղաւ զարմանքս, երբ տեսայ, որ եղօի այծերը դեռ
բակումն են: Իրանք, այդ անբան անասուններն էլ,
կարծես զգում էին, որ մի բան պատահել է, և առաջ-
նորդ այծերն անհանդիստ կերպով գնում էին դէպի
բակի այս ու այն կողմը, քաշերով իրանց ետևից ամ-
բողջ հօտը: Քիչ անցած, ես եկեղեցուց տեսայ աւելի
զարմանալի բան: Եղօն գնում էր հօտի ետևից, բայց
ոչ իր սովորական շորերով: Այժմ նա հագել էր սե-
չուխայ, դիմին դրել էր «քուխարա» փափախ: Մի խօս-
քով—հարսանիքի շորերումն էր:

Ես գուրս եկայ այդ նոր մարդուն նայելու: Բո-
լորովին դժուար կը լինէր ասել, թէ դա եղօն է, եթէ
նրա թուխ ու բաւական գեղեցիկ փափախը էլի դէպի
դէմքը քաշած չը լինէր: Հոգուական մոխրագոյն ու կո-
սիտ քսակն այլևս չէր երեսում նրա մէջքին: Եւ ի՞նչ
պէս կարող էր երեալ: Նա չէր սազի տօնական զգեստին:
—Լաւ է, բացականչեցի ես ժպտալով.—նա, ու-
րեմն, մասնակցում է տօնին...

Անցնելով մի խումք երիտասարդների մօտով, որոնք
ձու էին խաղում, նա կանգ առաւ, և մի ըովէ կար,
երբ ինձ թուռմ էր, թէ սկ ժայռերի վրայ կազմուած-
այդ մարդը մտաւ կեանքի խնճոյքի մէջ, իր տեղը բըռ-
նեց այնտեղ: Դա մի ըովէ էր, կը կնում եմ, որովհետեւ

Եղօն իսկոյն էլի շարունակեց իր ճանապարհը՝ Բայց ես զգացի, որ տան մէջ կար մէկը, որ ուղղում էր նրան դէպի մարդիկ, դէպի օրուայ չարն ու բարին:

Եւ ես գիտէի, թէ ով է այդ մէկը...

Բայց հասարակական կարծիքն այդպէս չէր դաշտում: Հասարակական կարծիք... շատ մեծ չէ այդ անունը մի խեղճ ու կորած հովուի վերաբերմամբ: Ես չեմ ասում, թէ ամբողջ գիւղը մտածում էր Եղօի մասին և կարծիք կազմում: Բայց չեմ էլ կարող ասել, թէ մտածողներ բոլորովին չը կային: Մեր թաղի կանաչք խօսում, դատում էին Եղօի և նրա «խեղճ ջահէլի» մասին. իսկ ով կարող է ասել, թէ գիւղում հասարակական կարծիքի առաջին հիմքը կանաչք չեն գնում:

Այն հանդամանքը, որ Եղօի ջահէլը «խեղճ» անունն էր ստացել, մի վկայութիւն էր, որ այդ նորահարսը բախւաւորներից չէր, ձիշդ է, ասում էին, նու խեղճ ու կորած ընտանիքից էր գուրս Եկել, ձիշդ է, հասակն առած աղջիկ էր նա, բայց հօ Եղօն էլ մի բռի ու անխօս հովուից աւել չէր, իսկ տարիեքով իր կնոջից Երկու անդամ աւելի մեծ կը լինէր: Ոչ. հովուին էլ Նատուած շնորք, հասկացողութիւն է տուել, մինչդեռ Եղօն չը գիտէ, թէ ինչ է ընտանիքը: Այսպէս դատելու համար կանաչք, ի հարկէ, ունէին իրանց փաստերը. փաստեր, որոնց աղբիւրը, ով գիտէ, գուցէ հէնց ինքը, «խեղճ ջահէլն» էր:

Զ

Ես այդ կարծիքն աւելի ես հաստատ ու տարածուած գտայ, երբ ամառուայ արձակուրդներին տուն վերադարձայ: Մայրս, չը նայած որ առաջ Եղօին անպայման դատապարտողներից չէր, այժմ նոյնպէս խըղճում էր նրա կնոջը: Եղօն իր երեկոները անց էր կացնում առաջուայ նման: Միակ տարբերութիւնն այն էր, որ առաջ նա, նայած Եղանակին, քնում էր կամ բաց

Երկնքի տակ կամ գոմռւմ, մինչդեռ հիմա նրա համար պատրաստուած էր անկախ օջախ, առանձին տուն:

Դեռ փոքրիկ ու խախուտ էր այդ անկախութիւնը: Զառիվայրի դմին, փողոցի այն տեղում, ուր երկու հին ծառերն էին բուսած, Մէհրունց ցանկապատն ընդհատում էր, տեղի տալով ձորին նայող մի տնակի, որ ու նէր մի հատ փոքրիկ պատուհան և նրա կողքին մի դուռ: Եինուած էր այդ բնակաբանը մեծ խնայողութիւններով. դա համարեա խորանարդ մի արկղ էր, ցածրիկ կառւրով. նրա դռնով հազիւ թէ մարդ կարսղանար մտնել առանց կոանալու: Բայց հին շինութիւն չէր. առջեի պատը նոր էր, նոր էին և այն տախտակները, որոնցից շինուած էր պատուհանի փեղկը: Մի բան, որ չէին ինայել այդ տանը, անասունների աղբն էր: Մէհրունց բակի բարձր տեղից տարիների ընթացքում դէպի այդ կողմն էին սրբել այծերի, ոչարների, տաւարի աղբը. կազմուել էր բաւական աչքի ընկնող մի երկար կոյս, որ ձգուած էր բակից դէպի ձորը և որի մէջ մինչև կէսը թաղուել էր տնակը:

Մէհրունց Աւագը, ամուսնացնելով իր որդուն, այդ տեղը նշանակեց նրա բնակութեան համար: Եւ նրա նոր հարսը այդ աղբերի մէջ էլ վառեց գիւղական տան ճրագը: Յաճախ, երեկոները մեր պարտէղից վերադառնալիս, ես մի տեսակ քաղցրութիւն էի զգում, տեսնելով այն փոքրիկ ու համեստ լոյսը, որ երեսում էր ուղիղ փողոցի վրայ բացուող դռան և պատուհանի փեղկի ճեղքերից: Նա զգալ էր տալիս, որ ներսում, պատառուած փալամերի վրայ նստած, հայ կինը՝ միայն իրան յատուկ յամառութեամբ հիւսում է գիւղական օջախ...

Մենակ էր այդ կինը. նա չունէր սեփական թոնիր, սեփական տաշտ՝ հաց թիւելու համար: Այդ կողմից եղօի տունը դեռ խառնուած էր նրա հօր տան հետ: Բայց կարելի՞ էր կասկածել, թէ գեղջկուհուն չի աջողվի մի անկախ ծուխի բոլոր սեփականութիւնները մտցնել այդ խեղճ ու կրակ տան մէջ: Պատմում էին, թէ նա

շառ է աշխատում, բայց Եղօն ժայռի պէս անընկճելի էր: Եղօն սովորեց այն փոքրիկ փոփոխութեան, որին Ենթարկուեցին նրա գիշերելու տեղերը: Կամաց-կամաց նամի քայլ առաւ գէպի մարդկանց հասարակութիւնը, բայց կարծես վախենալով, կանգ առաւ և յամառութեամբ հաստատ մնաց իր գերանների վրայ:

Մի երեկոյ ես էլ Եղօն նման մենակ անշարժացել էի կտրի ծայրին: Երկնքի մէջտեղից բոլորակ լուսինը կաթնային մի ծով էր փռել մեր հսկայական աշխարհի վրայ: Աննման էր բնութիւնը. իւրաքանչիւր ծառ, իւրաքանչիւր ձայն կախարդում էր...

Նուտով իմ ուշադրութիւնը խլեց մի արտասովոր ուրախ աղմուկ, որ այդ միջոցին մտնում էր գիւղի ծայրով: Ես տեսայ բեռնաւորուած ջորիների երկար շարքը և նրանց ուղեկցողներին, որոնք, համարեա առանց բացառութեան, երեխաներ էին: Ջորիները, շարան ընկած, քայլում էին աշխոյժ և թւում էր, թէ նրանք այս գիշեր մի առանձին հաճութեամբ են շարժում իրանց բօժօժները: Նրանք սկսեցին բարձրանալ Մէհրունց փողոցով և ես նկատեցի մեր ջորիները, եղբօրս որդուն՝ փոքրիկ Արտաշին, որ մեծի հովեր առած, երկար ճիպոտն ուսին դրած, քայլում էր իր ընկերակիցների հետ:

Առաջին խուրձերն էին, որ արտերից փոխադրում էին կալերը: Սկսուեց մի կատարեալ տօն բուլորակ լուսնի տակ, մէկն այն գիւղական տօներից, ուրոնք ծնւում են յանկարծ, ինքարուղիս, առանց ծրագիրների և պատրաստութիւնների: Զեմ կարծում, թէ լինէր աչք ունեցող մի մարդ, որ գուրս չը գար ողջունելու նոր հացի այդ բարերախտ յաղթական մուտքը և ամբողջ սրտից չը ցանկար նրան ամեն բարիք: Այս ու այն կողմից հարցեր էին տալիս երեխաներին. որ արտից է, ինչ են անում այնտեղ մնացած մեծերը... Մեր Արտաշը վագեց ինձ մօտ և տուեց ինձ ցորենի մի խոշոր, գեղեցիկ փունջ: Ես համբուրեցի նրան և թոյլ տուի, որ գնայ իր գործին:

Ինձ բերած ընծան ամենասիրուն ապացոյցն էր, թէ ինչու այնքան գեղեցիկ է գիւղական այս փոքրիկ տօնը, ինչու նոյն խակ չներն էլ, լեզուները կախ, վազում են տհաս ջորեպանների ետևից և միմեանց հետ հաշտ են ու բարեկամք Դեղին, չաղ, խոշոր հասկեր... Եւ այս բարիքի մի ամբողջ ծով ծփում էր գիւղի շրջականերում, հնձուորի մանդաղ հրաւիրելով...

Գիւղացու գոհունակութիւնը այն աստիճան յաշվշտակել էր ինձ այդ անմահական երեկոյին, որ բաւական ուշ նկատեցի իմ առջև բացուած փոքրիկ տեսաբանը—Եղօի կտրին էլ մարդ կար, բայց դա Եղօն չէր։ Մինչև կուրծքը հարսանիքի կարմիր քողով ծածկուած նորահարսն էր բարձրացել իր խղճուկ արկղի դլուխը, լուսինն ու խուրձերը տեսնելու համար։ Թէեւ ամեն տեղ մարդիկ կային, բայց նա կարելի համարեց շամաշել ու ձախ ձեռքով քիչ բարձրացնելով քողի ծայրը, մի փոքրիկ պատուհան բացեց իր աչքերի համար։ Նա նայում էր այս ու այն կողմը, իսկ ես հետեւում էի նրա գլխի շարժումներին, որպէսզի իմանամ թէ ինչով է հետաքրքրում այդ փակուած, անխօս լեզուն։ Եւ տեսնում եմ. երկար դէս ու դէն նայելուց յետոյ նա յանկարծ շուռ եկաւ դէպի այն կողմը, ուր գերաններն էին դարսած...

Այս անդամ երկար էր նրա հայեայքը—ես մինչև անդամ կարողացայ նշմարել նրա գէմքի մի փոքրիկ մասը, որքան թոյլ էին տափիս կարմիր ծածկոցը և երկնքի լոյսը։ Մի քանի անդամ նա, ցոյց չը տալու համար թէ շարունակ մի կէտի է նայում, փոխեց իր դիրքը, բայց իրոզութիւնը նոյնն էր մնում—նա նայում էր իր ամուսնուն։

Եղօն պառկած էր թթենու տակ, կիսով չափ ծածկուած տերենների ստուերներով։ Այծերը, երկեի խրախուսուած երեկոյի պայծառ լոյսերից, թռչկոտում էին գերանների գլուխը և այնտեղից ցած։ Եղօն շատ քիչ էր համբերութիւնից գուրս գալիս և նրա սաստող ձայ-

նը շատ քիչ էր լուսում։ Միայն երբ նրա աչքի առաջ երկու չափանձի ջահէներ կուուի բոնուեցին իրանց եղջիւրներով, նա մի ակնթարթում վեր ցատկեց և բոնելով երկու ախոյեանների ականջներից, տարաւ դէպի բակի ծայրը, ապա նորից յետ բերեց ու բաժանեց իրարից. իսկ ինքը էլի նստեց իր տեղը, էլի գլուխը դրեց գերանին։

Զորիները վերադառնում էին կալերից. նրանք դեռ մի անգամ էլ պիտի գնային արտերը և խուրձեր բերէին. ամառնային այսպիսի գիշերները գիւղացին ձեռքից չէ տալիս աշխատելու համար. Դարձեալ սկսուեց աղմուկը. աներից հարցեր էին առաջարկում փոքրիկներին, պատուերներ էին տալիս. ես էլ ասացի մեր Արտաշին որ վերադառնայ իր հօր հետ Այդ միջոցին ինձ թում էր թէ խեղճ նորահարսի հայեացքը աւելի ևս յամառութեամբ մեխուեց այծերի մէջ պառկած իր ամուսնու վրայ։ Կարծես նա ուզում էր վեր կացնելնրան, տանել, եթէ կարելի է, իր մօտ, որ միասին նստեն, միասին նայեն արտ գնացող երեխաներին, մի բան էլ իրանք ասեն։

Ես այդպէս հասկացայ այդ ծածկուած մարդու ծածուկ սիրալ, թէև, առհասարակ, սիրտ հասկանալը անկարելի է։ Ո՞վ գիտէ, գուցէ նորահարսը աւելին էր ուզում ասել իր ամուսնուն, գուցէ այդ կաթնային ովլիկանոսի մէջ նա կը կամենար աւելի հեռու գնալ, բաց անել զգացմունքների մի ամբողջ աշխարհ իր եղօի, իր նշանածի առաջ։ Գիւղացին զգացմունքների մի զանգուած է—մի նայէք նրա կոշտ դէմքին, նրա անտաշ լեզուին։ Եղօն միւնոյն դրութեան մէջ մնաց—անտարբեր դէպի ամբողջ աշխարհը, որ ոչինչ առնչութիւն չունէր նրա այծերի հետ։

Ոչ։ Նա մարդկային մի այլ, նախնական, ձքացած կեցութեան ներկայացուցիչն էր։ Ես հասկանում էի, որ դա հացի, գութանի անշարժ տան մարդը չէ։ Նրա մէջ ապրում էր հին թափառական հովիւր, որի տան յարկը

Երկնակամարն էր, իսկ հոգան ու հասկացողութիւնը—
իր մի քանի անսառններին ծառայել և փոխարէնը նրան-
ցից ուտելիք ստանալ:

Երբ այսպէս էր, կարելի էր զարմանալ որ այդ
մարդը այնքան ատում էր մարդկային հանրակեցութիւ-
նը, խորթ էր մնում նրա աղմուկին ու իրարանցումնե-
րին և ապրում էր գիւղի մէջ այնպէս, ինչպէս ապրում
էր իր սարի փարուն, ամայի ապառաժների վրայ...

Եւ ես վճռեցի որ այլևս հետաքրքրութիւն չէ ներ-
կայացնում մեր հարևան բակում ապրող նախնական
մարդու այդ բեկորը: Նա այնպէս էլ կը մնայ մինչև գե-
րեզման...

Է

Հետեւեալ ամառը ես ուշ գնացի տուն։ Վերջին
քննութիւններս էին և ինձ յուղողը միայն ուկետառ,
առաջնակարգ վկայական ստանալու ակնկալութիւնը չէր։
Ես նրան շուտ ստացայ և առաջին օրերում նա ինձ հա-
մար ոսկէ ցնորդներ էր հիւսում, օդային ամրոցներ կա-
ռուցանում։ Բայց շուտով ես սկսեցի կարդալ և այն՝
ինչ չէր գրուած իմ սիրուն վկայագրի մէջ, այլ երեսում
էր նրա տառերի և թուանշանների ետեից։ Դա ծանր,
մաշեցնող հարցն էր՝ ինչ անել այժմ։

Երբեւ գիւղացի տղայ ես պարտաւոր էի ժամանակ
չը կորցնել, պարտաւոր էի արագ և ճիշդ կերպով վճռել,
թէ որ կողմից և ինչպէս մտնեմ կեանքի մէջ։ Եւ այդ
պարտաւորութիւնը երկար պտըտեցնում էր ինձ քաղաքի
խեղդող ու կրակուած փողոցներում։ Ես գիմումներ էի
անում, ինդրում էի, իսկ ինձ խորհուրդներ էին տալիս,
առաջարկում էին սպասել, այս ինչ օրը գալ, ևայլն...

Յուլիսը վերջանում էր, երբ ես մնայ մեր գիւղը,
որ գոնէ այնտեղ մի բան վճռեմ։ Նոյն երեկոյեան մեր
ընտանեկան խորհուրդը քննում, ծանր ու թեթև
էր անում իմ մտադրութիւնները, ակնկալութիւնները։

Հաստատ բան ես ինքս էլ չը գիտէի և յաճախ նեղ դրութեան մէջ էի ընկնում մօրս կամ եղբայրներիս հարցերից ես կարծես կախուած էի օդի մէջ և միջից կիսում էի, որ ոտներս դնելու մի յենակէտ գտնեմ մայր հողի վրայ:

Անախորժ դրութիւն... Բայց հայրենի բնութիւնը ինձ հանգստացնում էր, վստահութիւն ու անհոգութիւն էր ներշնչում իմ մէջ: Եւ ես միւս օրը վերցրի հրացանսու գնացի լոր օրսալու Սիրում եմ հանգարտ, անլսելի քայլերով թափառել նոր հնձած արտերի սահմաներում, երբ լորերը տեսանելի են դաւնում, երբ նրանք գուրս են դալիս բաց տեղերը՝ հնձուորի թափած հատիկները կըտցահարելու համար: Բայց այս անգամ ես ուշացել էի. արտերում այլես չը կային դարսած խուրձեր և միայն բարակ քամին էր խաղում կարճ ցօղունների երկար տարածութեան վրայ:

Իրիկնապահ էր արդէն, բայց ես որս համարեա չունէի: Գնացի դէպի լեռնակողմերը, յոյս ունենալով գտնել այնտեղ կորեկի արտեր: Թէև այդ միտքն էլ ինձ մի առանձին օգուտ չը տուաւ, բայց ես չը զղացի: Դեռ զարմանալի թարմու անուշաբոյր էին այնտեղի կանաչները. ի՞նչպէս էին նրանք սրանչացնում մարդուն տարուայ այս ժամանակին, երբ արեգակը այրած ու վերջացրած է լինում նոյն իսկ մեր գիւղի չափ բարձր տեղերի բուսականութիւնը: Մի արինուուշտ որսորդից ես ակամայ դարձայ խաղաղ զբունող, որ բնութեան զարդեր է որոնում:

Ես ճանաչում էի մի այդպիսի զարդ և դա Ուռենիների հռչակաւոր ձորն էր: Հռչակաւոր էր ձորը նըրանով, որ այնտեղ ուռենիներով հովանաւորուած մամապատ քարերի միջից բղխում էր մի յորդ ու ցուրտ աղբիւր: Փողովրդի մէջ կար համոզմունք, թէ դա անմահական չուր է և կարող է կենդանացնել նոյն իսկ ծանր հիւանդներին: Եւ ես տեսել էի գիւղական դեղին մոմեր, կպցրած այդ հրաշագործ ջրի ակունքի քա-

բերին. տեսել էի հալուած հիւանդներ, որոնք եկել էին խմելու և առողջութիւն գտնելու:

Անտարբեր անցնել այդ սրբութեան մօտով չէր կարող ոչ մի գիւղացի Փայլերս ուղղեցի դէպի Ուռենիների ձորը: Բայց գեռ ազբեւրը չը տեսած՝ ես կանգ առայ: Ազբեւրի գիւխն փուռած էր խոտերի և ծաղիկների մի մեծ գորգ. այդտեղ ծունկ չոքած և երկու ձեռքերի վրայ յենուած մի մարդ սողում էր մի փոքրիկ մանուկի հետ...

Ես իսկոյն ըմբռնեցի, որ դա ուխտաւոր հիւանդէ: Պարզ էր որ մենաւոր մարդը խաղում էր երեխայի հետ. աշխատում էր ամեն կերպ երեխայանալ, ինչ որ բան էր ասում նրան մի տարօրինակ խուլ ձայնով, յաճախ և ծիծաղում էր ու նրա ծիծաղը նման էր նեղ քարային խոռոշում դդնչող ջրի ձայնին:

Նայեցի ձորին: Այնտեղ ցրուած էր այծերի հօտը, իսկ ուռենիների մօտ կանգնած մի կին նայում էր թէ այծերին և թէ երեխայի հետ խաղացող տղամարդին: Աւելի վերջինիս էր նպյում, և նրա ծաղկատար, ընդհանրապէս տգեղ, շատ հաստ դէմքը յաճախ փայլում էր մի հրճուանքից: Ուշ նկատեց նա որ այծերից մի քանի սը աշխատում են գուրս գալ ձորից՝ նրա մի խիստ ուղղակի կողով: Շատ վտանգաւոր ճանապարհ էր դա, և կինը շտապով քարեր շպրտեց դէպի այն կողմը, կանչեց իր զիլ ու սուր ձայնով, ապա և վազեց այդ կապը կտրածների ետեից: Այծերը վերջապէս յետ դարձան և կինը իր նախկին տեղն էր գնում, երբ տեսաւ ինձ ու իսկոյն ինչոր բան ասաց ոտով-գլխով երեխայութեան մէջ թաղուած տղամարդին:

Սա բարձրացաւ տեղից, նստեց, նախ երեխան գուգումը գրեց, ապա նայեց ինձ:

Եղօն էր... փափախը յետ դրած, ճակատը բաց...

Ամենից անակնկալը, ամենից զարմանալին այդ էր — ճակատը բաց... Ամբողջ գիւղը համողուած էր, թէ գեռ ոչ ոք չէ տեսել եղօի ճակատը, բացի, ի հարկէ,

Նրա մօրից Բայց ինչպէս է, որ այժմ ես տեսնում եմ
նրան, իսկ նա կարծես դիտմամբ չէ ծածկում, կարծես
անպատճառ ուզում է, որ ամենքը տեսնեն: Մի զար-
մանալի ճակատ... Դէմքի միւս մասերի հետ համեմա-
տած՝ նա սպիտակ էր, համարեա ձիմափայլ: Քանի
տարի էր, նա արեի երես չէր տեսել: Այժմ յուլիսեան
արեգակը թափում էր իր ճառագայթները այդ սպի-
տակ ու քննքոյշ կաշու վրա, և Եղօն... ոչինչ, կնճիռնե-
րով շրջապատուած իր նեղլիկ աշքերով նայում է ինձ,
և նրա կարճ շրթունքները կարծես ժպտում են, կար-
ծես հարցնում են ինձանից, թէ ինչպէս է գոգի երեխան:

Դա այն Եղօն չէր, որին ես ճանաչում էի տասն և
հինգ տարիներից ի վեր: Մօտենալով նրան, ես ասացի.
— Բարի օր, դրացի Եղօն:

— Աստուծու բարին, բարով եկար, իսկոյն պատաս-
խանեց նա ատամների արանքով:

Առաջին անգամն էի լսում նրա խօսակցութիւնը,
առաջին անգամն էի տեսնում նրան պատասխան տա-
լիս: Բայց ինչը չէր առաջին անգամ...

Անմահական ջրից կուշտ խմելուց յետոյ, ես յետ
դարձայ բախտաւոր հօր մօտ:

Ը

— Երեխան քո՞նն է, դրացի Եղօն:

— Հա, մատաղ եմ, Աստուծու տուածն է:

Ես նստեցի նրա կողքին: Մի փափլիկ, սիրուն երե-
խայ էր՝ շատ աշխոյթ ու խոշոր աշքերով, որոնք իսկայն
յառուեցին ինձ վրայ: Ակսեցի մատովս խաղանել նրա
ուռուցիկ, փոքրիկ շրթունքները, նա յետ տարաւ իր լիքը
թշերը և ծիծաղեց: Մի կատարեալ հրեշտակ էր: Նկա-
տեցի որ հայրը կամացուկ սեղմեց նրան իր կրծքին և
թեթե կերպով հառաչեց:

— Անունն ինչ է, դրացի Եղօն:

— Անթառամ, քահանան դրեց:

—Դու համաձայն չեիր, ինչ է:

—Ասում եմ, Աստուծու տուած երեխայ է... անունն էլ քահանան դրեց... Ասում եմ, անունը որ քահանան դրեց... Աստուծու կարգն է... Ուրեմն անունը այսպէս էլ կը լինի... Անթառամ...

Նա կարծես զգում էր որ գժուար է իրան հասկանալ, ուստի աւելի ևս առաջ տարաւ իր բացատրութիւնները: Բայց որքան առաջ էր զնում, այնքան գժուարանում էր բանը. խօսքերը նա արտասանում էր դէմ ընկնելով, համարեա զօռով:

Խեղճ Եղօ... նոր էր սովորում խօսելը: Ես նկատեցի, որ նա հեշտ պատասխանում է կարծ հարցերին, երբ պատասխանն էլ կարծ է: Այդպէս նա վարժուել էր իր կեանքի ընթացքում: Բայց այժմ նրան յուզում էին զգացմունքներ, որոնց պէտք էր բացատրել, փիլտրիայական հայեցքներ, որոնց պէտք էր արտայայտել: Առանց դրանց անկարելի էր այժմ եօլագնալ, որովհետեւ այժմ այդ երեխան տակն ու վրայ էր արել նրա ամբողջ էութիւնը: Ահա այդ նոր, բարդ զգացմունքները նա սկսում էր «ասում եմ» բառերով, բայց էլի խառնում էր, խօսքի տակն ու գլուխը չէր գտնում և գտածն էլ ճիշդ չէր արտասանում:

Ես այսքանն իմացայ, որ նա իր այդ կցկտուր, անկապ խօսքերով կամենում է ասել, թէ իր երեխան աշխարհ է եկել ամենայն օրինականութեամբ. տուել է Աստուած, մկրտել է քահանան, հետևաբար Անթառամը Անթառամ պիտի լինի, ինչպէս մի ուրիշ Եղօ է, Մարիամ է, կամ Հոռոմսիմ:

—Ի հարկէ, ի հարկէ, դրացի Եղօ, շտապեցի հաստատել ես—քո երեխան հրեշտակ է, մեր գիւղում հազիւ թէ դրա պէս մի ուրիշ տիպիկը լինի:

Եղօն ուրախութիւնից ձեռքը տարաւ յօնքերի վըրայով. միենոյն ժամանակ ես լսեցի մի խեղդուած շնչոց. «Աստուած քեզ պահէ»:

Այսպէս ասողն արդէն Եղօն չէր, այլ ձորի կինը,

Երեխայի մայրը, որ նստել էր մեզանից քիչ հեռու և կողքից նայում էր մեղ, աջից ըլ դցելով և այծերին։ Ամեն օր նա երեխան շալակած բերում էր այստեղ, իր ամուսնուն փոխարինելու համար։ Երեխան տալիս էր նրան, իսկ ինքը նայում էր հօտին։

Եւ Եղօն ոչինչ չէր ինայում փոքրիկի համար։ Տեսայ նրա կոշտ ձեռքերի ու նախնական մարդուն յաւ տուկ հնարիմացութեան նշանները։ Անթառամի վկից կախած էր խոտերի մէջ վաթաթած մի խիունչ։ Տեսայ, ինչպէս նա շարունակ ցոյց էր տալիս երեխային մի փայտի կտոր, որի վրայ նա դանակով փորփորել էր մարդու գէմքի նման մի բան, որ աւելի վախեցնել կարող էր իր այլանդակութեամբ։

Եղօն ճանաչում էր մօրս, ինչպէս նաև ուրիշ հաւ րեաններին։ Նա գովեց մօրս, բայց ես տեսնում էի, որ նրա բոլոր տեղեկութիւնները նորագոյն ժամանակից էին սկսում, երեխայի ծնուելու օրից ոչ հեռու։ Նա հետաքրքրուեց և ինձանով։

Երեկոյեան ստուերները շատ էին երկարացել։ Մենք ճանապարհուեցիք դէպի դիւդ։ Երեխային շալակեց մայրը։ Եղօն քշում էր այծերը։ Ես նրա հետ էի գնում։ Յանկարծ նա կանգ առաւ, վերցրեց հրացանս, սկսեց տակին-գլխին նայել։

— Լաւն է, քաղաքի է, երեխ, հարցրեց նա։

Ես ցոյց տուի ամեն ինչ, բացարեցի։ Բայց նա յանկարծ ընդհատեց ինձ մի նոր հարցով։

— Աս մարդ սպաննում է։

Ստանալով դրական պատասխան, նա շտապով ինձ տուաւ հրացանը և առաջ գնաց։

— Ասում եմ երեխատէրը... չը պէտք է բռնէ... Որ սպանող է... Ասում եմ այսինքն չար է... Զի իմացուի...։

Ես հանգստացրի նրան, ասելով որ դատարկ է հրացանը։

— Քաղաքում լաւ բաներ կան, հա... Ասում եմ

ով գիտէ, իսկի խելք չը կտրելի բաներ, զարմանալի...
Ասում եմ՝ այնտեղ մարդ էլ են շնում...

— Ինչ որ սիրտդ ուզէ, դրացի եղօ:

Դրացիս մի անձկալից, ճնշուած, հայեացք դցեց
դէպի այն վիթխարի լեռնաշղթան, որ մեր գաւառի
սահմանագլումն է կազմում։ Մեր գիւղացիների համար
դա ծանօթ աշխարհի վերջն էր և ամեն մի անծանօթ,
անիմանալի բան նրանք տեղաւորում էին այդ շղթայի
ետևում։ Եղօն էլ, երեխ, կարծում էր թէ քաղաքը,
ինչպէս այդքան զարմանալի աշխարհ, գարձեալ այնտեղ
է գտնւում։ Ես ձեռքով ցոյց տուի բոլորովին հակառակ
ուղղութիւն։ Բայց նա ուշադրութիւն չը դարձեց. նրա
համար իրողութիւնը չէր փոխում այն հանդամանքից,
թէ քաղաքը այս կողմում չէ, այլ այն կողմում։

Լսուեց երեխայի լացը։ Մայրը մօտեցաւ, յայտնեց
որ հօր համար է լաց լինում։ Եւ նորից գերերը փու-
խուեցան։ Հովուական ցուալը վերցրեց կինը, իսկ երե-
խային խտտեց եղօն։ Սա դեռ չէր էլ սովորել երեխայ
խտտելը։ Երկու ձեռքով սեղմել էր նրան իր կրծքին ճիշդ
այնպէս, ինչպէս մի ութ տարեկան երեխայ կը խտէր։

Հէնց որ փափիկ մանուկը տաքացրեց հայրական
կուրծքը, եղօն էլի կարկը զգաց խօսելու, երկար խօ-
սելու։ Էլի կմկմալով, յաղթահարուելով բառերից, ամեն
փայրկեան կորցնելով մտքի թելը, նա ասաց ինձ.

— Այսպէս հազար-հազար ուլեր եմ մեծացրել...
Ասում եմ, գիտեմ։ այսինքն թէ ինչ է փոքր երե-
խան... Տպք, փափուկ, ասում եմ, թոյլ, փայր դցես,
հոգին կը տայ... Դժուար է պահելը... Ասում եմ...
չը կայ այծի պէս սիրուն երեխայ ծնող... Բայց դէ
մարդը ջոկ բան է... Ասում եմ՝ օ, քանի ուլիկներ եմ
պահել մեծացրել փէշիս մէջ, ծոցումն Սովոր եմ։ Ան-
լեզու, պուճուր են, մարդու սիրտը այրում են... Ա-
սում եմ՝ գայլից, թշնամուց, ցրտից պահել եմ շտե-
րին։ Բայց դէ մարդը ջոկ է։ Ես տեսայ... Ասում
եմ, Անթառամի պէս իսկի մի ուլ չեմ տեսել...

Ահա որտեղից էր այդ մարդը վերցրել այնքան ուշ
դեպի փոքրիկները՝ Նորածին ուղերին խնամողը ամբող
ջովին յափշտակութիւն էր դարձել, երբ ծնուել էր ոչ
մի ուղի նմանութիւն չունեցող Անթառամը...

Դիւզի վերևում մենք բաժանուեցանք միմեանցից:

Մեր տաճը վաղուց գիտէին որ Եղօն փոխուել է,
տանու մարդ դարձել Երեկոները այլևս Եղօին չէր կա-
րելի տեսնել թթենիների տակ: Նա կտրել էր բակի
մեծ մասը մի բարձր ցանկապատով, ուր և գիշերները
փակում էր այծերին: Ինքը կամ իր տան շեմքումն էր
լինում նստած, կամ կտուրի վրայ: Եւ շատ քիչ էր պա-
տահում որ հրաշագործ փոքրիկը նրա մօտ չը լինէր:

Օգոստոսի կէսին, ստանալով նամակ, որի մէջ ինձ
առաջարկում էին ուսուցչի պաշտօն մի մեծ գիւղա-
քաղաքում, ես այլես աւելորդ համարեցի տատանուե-
լը ու ճանապարհ ընկայ իմ պաշտօնատեղին:

Եղօին այլես չը տեսայ: Իսկ այն, ինչ որ հիմա
պիտի պատմեմ, ես վերցնում եմ մօրս հաղորդածներից:

թ

Աշնանը խիստ փոփոխական և վատ էին եղանակ-
ները մեր գիւղում: Եկաւ վաղաժամանակ ձիւն, նա
հալուեց մի տաք քամուց, ապա սկսուեցին անվերջ խո-
նաւ օրեր: Դալիս էին անընդհատ անձրեներ, ամեն
տեսակ անձրեներ, կամ մանր, ասղի ծայրերի չափ մանր,
կամ յորդ-դարնանային, կամ ձիւնախառն—կատարեալ
բուք ու բորան...

Ամեն ինչ փառում, լուծւում էր: Հիւանդութիւն-
ներ երեացին անսառնների մէջ, իսկ շատ չանցած,
սաստկացան և մարդկանց հիւանդութիւնները:

Պարզ նրկինք չէին տեսել շաբաթներից ի վեր:
Ողբում, հառաջում էր Եղօի տնակը: Աղբային խոր ցե-
խերի մէջ թաղուած, ցուրտ ու ջրողող էր նա և անց
էր կացնում մուայլ ու յուսահատ օրեր: Նրա մէջ չը կար

մի ամ տեղ, որ չոր լինէր. ջուրը ծլում էր կտուրից,
կաթոյը չէր դադարում մի բռպէ անգամ, որպէսզի
տանը աչք բաց անեն: Վառում էր փոքրիկ օջախը,
բայց ծուխը խեղդում էր այնպէս, որ նոյն խակ գիւ-
ղացին էլ չէր դիմանում նրան. բաց էին անում դուռն
ու պատոհանը, այժմ էլ ցուրտն էր ներս թափւում:
Տան ներսը ոչնչով չէր զանազանում փողոցից:

Ահա այդ թշուառ յարկի տակ էլ մտաւ, այն հիշ-
ւանդութիւնը, որ սկսել էր գերեզման տանել երեխաւ
ներին: Բկուռց...

Սարսափահար էր ամբողջ գիւղը: Խնչպէս ընդհաւ-
նուր գժբախտութեան ենթարկուած մի հօտ, գիւղաւ-
ցիները աւելի մօտենում էին միմեանց, աւելի սեղմում
էին իրար: Որքան կուրծքեր էին ծեծւում; հրքան ար-
տասուր թափուեց: Կտրուած ամբողջ աշխարհից, գլխի
վերև ունենալով մի պլոտը, ցուրտ ու լացկան երկինք
միայն, գիւղը երեխայի նման. հեկեկում էր, ողորմու-
թիւն էր հայցում յուսահատ, մատաղներ էր մորթում:
Եղօն իր ձեռքով մի լաւ նոխազ մորթեց իր տան շէմ-
քում: Բայց հիւանդութեան չար ոգին ոչինչ պաղատանք
ու արիւն չէր ընդունում:

Պատի մէջ շինած մի փոքրիկ խորշում, ուր գիւ-
շերները նաւթի ճրագն էր վառում, պառկած էր Ան-
թառամը: Ամբողջ տան մէջ միայն այդ անձուկ տեղն
էր, ուր չէին հասնում կտուրից ներս ծծուող ջրի կաթիլ-
ները: Հազիւ էին կարողացել տեղաւորել այնտեղ եւ-
րեխային, որ առանց այդ էլ սարսափելի գժուարու-
թեամբ էր շունչ բաշում:

Գիշեր է: Նաւթի ճրագը ձեռքին, կանգնած է եւ-
զօն իր սիրուն ուկիկի դիմաց և նայում է, անվերջ նայ-
ում: Կարծես նա լաւ զգում է որ երեխային ազատե-
լու համար միայն այդ միջոցն է մնում—նայել, նայել...

Երրորդ անգամն էր, ինչ նա դիմում էր իր կը-
նոյլը.

— Մաթու աղջիկ, դեղ չես իմանում... Դու այսպէս շատ կը լինես տեսած...

Բայց Մաթու աղջիկը միայն կարկուտի պէս արագածուքներ էր թափում. նա ոչինչ չը գիտէր:

Արդէն կապտել է սկսում պատի մէջ դրած երեխայի սիրուն, լիքը երեսը: Նրան խեղդում են: Այդլաւ է տեսնում հայրը և այս ու այն կողմ է նայում; ձեռքը մտցնում է պատի խորշը, ուզում է գտնել այն ձեռքը, որ խեղդում է, ուզում է կռուի բռնուել այդ անգութ խեղդողի հետ:

Նա յետ նայեց. կինն արդէն ծեծում էր ծնկները և մորմոքուելով ասում էր, թէ երեխան ձեռքից գնաց:

— Զան, Մաթու աղջիկ, դու էլ ես ցաւ իմանում...

Ասաց նա, գլուխը դրեց կնոջ ուսին և իր արտասուքները, իր առաջին արտասուքները, խառնեց նրա արտասուքների հետ:

— Խեղդեցի՞ն, խեղդեցի՞ն, մրմնջաց Մաթու աղջիկը:

Եղօն մի անգամ էլ նայեց մորթուող հաւի պէս թրպրտացող երեխային: Եւ այս անգամ նա գոռաց.

— Այն ով է, որ խեղդում է երեխայիս:

Ու ճրագը տալով կնոջը, ինքը գուրս վազեց:

Գնում էր խեղդողի դէմ մարդ կանչելու: Մարտափելի մութ գիշեր էր: Ամեն տեղ միայն անձրեսի խուլ, միանման վշտոցն էր տիրում:

Եղօն ծեծեց տանուտէրի գուռը, ուշագրութիւնց դարձնելով շնահաշոցին, որ բարձրացրեց այդ տարաժամ աղմուկը: Դուռը բացուելուն պէս՝ եղօն ներս ընկաւ և հեալով ասաց.

— Երեխայիս խեղդում են. Ես թագաւորի հպատակ եմ; մի տարի է, առանձին գլուխ էք դրել ու հարկ էք առնում:

Տանուտէրը նոյնպէս ցաւոտ մարդ էր և շուտ հասկացաւ Եղօնին: Արտասուքները կուլ տալով, նա ասաց թէ երեք օր է ինչ այդ նոյն անգութ խեղդողը տարել է իր մի թոռանը, իսկ միւսը հիմա էլ պառկած է:

Եետ է գնում Եղօն, գիտէ որ այդ կողմից օգնութիւն չը կայ:

Բայց նրա միտքը գործում է տեսնդային եռանդով ու նա նոր միջոցներ է գտնում: Գալիս է, մեր դուռն է ծեծում:

—Մի ճար, Առուշանենց հարս, ասում է նա մօրըս.—բաղաքում մարդ ունիք... Ասում եմ՝ գուցէ քաղաքի մի հնարք իմանաք... Այնտեղ իմանում են, այնտեղ—քո տղան էր ասում—ինչ ուզում ես...

Քաղաքն էլ ոչինչ չէ տալիս: Բայց Եղօն չէ էլսպասում մօրս պատախանին: Յանկարծ նա յիշում է անմահական ջուրը: Ու վերցնելով մեր սրահում դրած փոքրիկ ամանը, վազում է դէպի Ուռենիների ձորը:

Սարսափելի է մտածել որ գիշերուայ այդ ժամին այդպիսի եղանակին, կը լինի մէկը, որ դուրս գայ մեր գիշոց, միշտ և միշտ դէպի բարձր, դէպի սարերը կը գնայ: Բայց Եղօն մանկութիւնից լսել էր մեծից ու փոքրից, թէ անմահական է այդ ձորի ջուրը, թէ նա դեղ է բոլոր հիւանդութիւնների դէմ: Այժմ նա միայն այն գիտէր, որ ուշ է յիշել որ պէտք է վազել, սար ու ձոր կտրել, որ կարելի լինի մի ժամ առաջ հասնել, մի ժամ շուտ հասցնել անմահական ջուրը Անթառամին:

Ցիշում էր նա կապտած փափլիկ թշերը, փոքրիկ բերանը, կրծքի վրայ դրած թաթիկը: Իսկ սարերում ձիւն էր գալիս, բուքն էր բոլորուել...

Եղօն էլ բոլորում էր բուքի հետ, բայց վազում էր, վազում...

Երբ յրով լցրած ամանը ձեռքում բարձր բռնած՝ մօտենում էր նա իր տնակի դռան, արդէն առաւօտեան լոյսը բացւում էր: Բայց և ամեն ինչ վերջաշել էր...

Երեք հոգի էին Անթառամին գերեզմանատուն տանողները՝ քահանան, տիրացուն, որ խտաել էր երեխային, և ինքը՝ Եղօն: Փոս փորողը դեռ չէր վերջացրել գործը, անձրեւ մաղում էր անդադար, որքան ցեխոս

Էր Անթառամի յաւիտենական բնակարանը. իսկ նա-
արկղիկ էլ չունէր...

Քահանան այժմ մանաւանդ շտապում էր. Ո՞վ գի-
տէ, եթէ նա այնքան չը շտապէր, գուցէ Եղօն աւելի ժա-
մանակ ունենար իր սրտին միսիթարանք գտնելու։ Նա
մնաց գերեզմանատանը մենակի։ Արդեօք ինչ էր անում
այնտեղ։ Պոկեց իրանից մի բան ու դրեց Անթառամի
խոնաւ ծոցում թէ ինչ էր, բայց այն օրուանից Եղօն
սկսեց, ինչպէս ասում են, «քարակ մաներ»։

Տանջուեց ամիսներ. չէր պառկում, շրջում էր իբ-
րև ստուեր։ Մարդուն դուրս էին հանել այն աշխար-
հից, ուր նա ապրել էր երեսուն տարիներ՝ փափախը
աչքերին քաշած։ Յնցումները այնքան ուժգին էին, որ
անծանօթ կեանը այնպէս անողորմ կերպով սկսեց
տակն ու վրայ անել նրա խեղճ միտքն ու հոգին, որ
նա դարձաւ մի փխրուն աման, վայր ընկաւ ու ջար-
դուեց, գնաց պառկելու իր ուլիկի կողքին։

Ժ

Նորից եկաւ ամառը, նորից նա իր կախարդական
հմայքներով ծածկեց թէ արտերը, թէ գերեզմանները,
թէ կեանքի գեղաժպիտ յոյսերը, թէ անկենդան աւե-
րակները։

Ես տխուր էի տուն վերադառնում։ Մեր գիւղը
գեռ չէր մնուացել իր կորուստները։ Այս անգամ ինձ
դիմաւորեցին լացով. ընդհանուր աղէտը մեզ էլ շատ
վնասներ էր տուել, մեր երեխաներից մէկն էլ մե-
ռել էր։

Բայց, խոստովանում եմ, ամենից շատ ինձ ցա-
ւեցնում էր այն աւերանքը, որին ենթարկուել էլ այ-
ծարած Եղօի տունը։

Մնացել էր միայն Մաթու աղջիկը. նա վերցրել
էր ծնօտի վրայ կապած կարմիր կտորը. դա սուգի
նշան էր։

Փակ էին Եղօի դուռն ու պատուհանը, ես առաջ
էլ, շատ էի տեսել այդպէս փակ. բայց այժմ—գերեզ
մանը, յաւիտենական ոչնչութիւնն էր այդպէս կանգնել
այդ խեղճ տան մէջ, ուր նոր սկսել էր մի դիւզական
օջախ հաստատուել:

Իմ այս տպաւորութիւնը հաղորդեցի մօրս: Իսկ նա
ցոյց տուեց ինձ եկեղեցու մօտ ցցուած ահազին ժայռը
և ասաց.

—Տեսնո՞ւմ ես այն քարը: Դիր նրա մէջ սիրտ, և
նա էլ կը հալուի...

Լ է 0